

## ՔԱՐԱՆՁԱՎՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀՀ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Սմբատ Ռուբիկի Դավթյան՝ Մերի Վարդանի Վարդանյան, Նարինե Սամվելի Միմոնյան,  
Անահիտ Լաերտի Արամյան

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, ք. Երևան, ՀՀ

*'srdavtyan@mail.ru*

Հոդվածում քննարկվում է քարանձավների՝ զբոսաշրջության տարբեր ուղղություններում (տեսակներում) օգտագործելու հիմնախնդիրը ՀՀ-ում: Ներկայումս այդ հսկայածավալ և ինքնատիպ ռեսուրսը չափազանց փոքր դեր է խաղում հայկական զբոսաշրջային պրոդուկտ ձևավորելու գործում: Պատճառներից մեկը՝ քարանձավների վերաբերյալ համապատասխան ինֆորմացիայի բացակայությունն է: Հոդվածում ներկայացվող դրույթները կարող են օգտակար լինել զբոսաշրջային ոլորտի կառավարիչների և քարանձավային զբոսաշրջության ոլորտում ներդրումներ իրականացնողների համար:

**Բանալի բառեր.** արկածային զբոսաշրջություն, ճանաչողական-կրթական զբոսաշրջություն, կրոնական-ճանաչողական զբոսաշրջություն, մշակութային զբոսաշրջություն, էքսկուրսիոն քարանձավ

## Ներածություն

Քարանձավները՝ (բնական և արհեստական ծագում ունեցող ստորգետնյա դատարկությունները, տարածությունները, խոռոչները) օգտագործվում են տարբեր նպատակներով. հասարակական կյանքի տարբեր բնագավառներում գրանցվել է դրանց օգտագործման մոտ 130 ուղղություն [1]: Բազմաթիվ երկրներում դրանք լայնորեն օգտագործվում են որպես զբոսաշրջային օբյեկտներ [2]: Այսօր հազարավոր էքսկուրսիոն քարանձավներ դարձել են ամենաայցելվող զբոսաշրջային վայրեր: Այսպես, 2021 թ. աշխարհի էքսկուրսիոն քարանձավներ են այցելել 120,8 մլն զբոսաշրջիկ, ովքեր ապահովել են 2,06 մլրդ ԱՄՆ դոլար եկամուտ [3], այսինքն յուրաքանչյուր զբոսաշրջիկ քարանձավ մուտք գործելու համար վճարել է միջին հաշվով 17 ԱՄՆ դոլար:

ՀՀ տարածքում առկա տասնյակ քարանձավներ ոչ միայն երկրի տնտեսության համար եկամտի կարևոր աղբյուր կարող են հանդիսանալ, այլև աշխատանքով ապահովել հարյուրավոր մարդկանց, միաժամանակ նպաստելով դրանցում պատշաճ սանիտարական-էկոլոգիական վիճակի պահպանմանը: Դրանք զբոսաշրջության տարբեր ուղղությունների (տեսակների) զարգացման համար լավագույն հիմք են հանդիսանում: Դրանցում կարող են իրականացվել ճանաչողական-մշակութային և արկածային ուղղվածություն ունեցող տուրեր, իսկ գիտական, գեղագիտական ու պատմահնագիտական մեծ պոտենցիալով քարանձավները հիմք են հանդիսանում էքսկուրսիոն քարանձավների ստեղծման համար: ՀՀ Կառավարության կողմից 2015 թ. ընդունված

ծրագիրը [4] կարող է խթանել քարանձավային զբոսաշրջության զարգացմանը, եթե այն ունենա շարունակական բնույթ և նոր ռեսուրսներ ընդգրկվեն ոլորտում: Այդ նպատակի համար ստորև ներկայացվում են քարանձավային տուրիզմի զարգացման առաջնակարգ ուղղությունները և օբյեկտները:

### Նյութեր և մեթոդներ

1980-ական թթ. կեսերից սկսած ՀՀ տարածքում ուսումնասիրվում են քարանձավները՝ դրանց գիտական, զեղագիտական և տնտեսական արժեքը բացահայտելու նպատակով [5]: Դրա արդյունքում ստեղծվել է արխիվային ֆոնդ, որտեղ ներկայացված են տվյալներ մի քանի հազար ստորգետնյա տարածությունների վերաբերյալ: Հայ մասնագետների հետազոտությունները ներկայացվել են միջազգային կոնֆերանսներում, սիմպոզիումներում [6]: Հայաստանի քարանձավային հարուստ ժառանգության մասին են վկայում նաև օտարերկրյա մասնագետների հետ իրականացված հետազոտությունները [7]: Վերոհիշյալ նյութերի վերլուծությունը և մեր կողմից իրականացված դաշտային հետազոտությունները ցույց են տվել, որ մի քանի տասնյակ բնական և արհեստական խոռոչներ կարող են օգտագործվել և նպաստել քարանձավային զբոսաշրջության զարգացմանը:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ ոչ մասնագիտական գրականության մեջ բոլոր տեսակի ստորգետնյա դատարկություններն (խոռոչները) անվանվում են քարանձավներ, մինչդեռ քարանձավը դրանց միայն մի տեսակն է: Ձևաբանական մյուս տեսակներն են ժայռածածկերը, քարայրները և հորերը: Բոլոր այդ խոռոչները միմյանցից տարբերվում են երկարությամբ, բարձրությամբ, լայնությամբ և դրանց միջև եղած հարաբերակցությամբ:

1. Ժայռածածկերն ընկած են քարափների ստորին մասերում, բաղկացած են մեկ ձևաբանական տարրից և աչքի են ընկնում փոքր երկարությամբ և համեմատաբար մեծ լայնությամբ ու բարձրությամբ: Այստեղ խոռոչի երկարությունը փոքր է բարձրությունից և լայնությունից, իսկ լայնությունը մեծ է բարձրությունից: Սովորաբար դրանց երկարությունը չի անցնում մի քանի մետրից, իսկ բարձրությունը և լայնությունը՝ մի քանի տասնյակ մետրերից:

2. Քարայրները նույնպես հորիզոնական հատակ ունեցող դատարկություններ են: Դրանք սովորաբար մեկ դահլիճից կազմված ստորգետնյա խոռոչներ են և ունեն առավելագույնը մի քանի տասնյակ մետր երկարություն և լայնություն և մի քանի մետր բարձրություն:

3. Քարանձավները հիմնականում հորիզոնական հատակ ունեցող խոռոչ դատարկություններ են, որոնք երկրի մակերևույթի հետ կապված են մեկ կամ մի քանի մուտքերով: Դրանք ստորգետնյա մեծ համալիրներ են, որոնք կազմված են խոռոչ չափեր ունեցող դահլիճներից և դրանք իրար հետ կապող նեղ անցուղիներից (միջանցքներից): Այստեղ խոռոչի երկարությունը բազմապատիկ անգամներ երկար է դրանց բարձրությունից և լայնությունից: Քարանձավների երկարությունը սովորաբար անցնում է մի քանի տասնյակ մետրից և հասնում է կիլոմետրերի:

4. Հորերը մինչև մի քանի տասնյակ մետր խորություն (առավելագույնը՝ 40...50 մ) ունեցող ուղղահայաց կամ հատակի մեծ թեքություն ունեցող խոռոչներ են՝ ստորին մասում ընդլայնումով կամ առանց ընդլայնման: Դրանք ունեն քարափավոր լանջեր և շրջանաձև հատակագծեր՝ մի քանի տասնյակ սանտիմետրից մինչև մի քանի մետր տրամագծով: Երբեմն 20 մ -ից ավելի խորություն ունեցող հորերն անվանում են վիհեր:

Օագումնաբանական առումով առանձնացվում են ստորգետնյա դատարկությունների (խոռոչներ) հետևյալ տեսակները՝ կարստային, կլաստոկարստային, հրաբխային, սուֆոզիոն և արհեստական:

1. Կարստային խոռոչների առաջացման համար անհրաժեշտ են երեք պարտադիր պայմաններ՝ կարստացվող (հիմնականում՝ կարբոնատային) ապարներ, դրանցում ճեղքերի առկայություն և շրջանառվող ջուր: Վերջինս, շարժվելով կարբոնատային ապարների ճեղքերով, լուծում է դրանք, ձևավորելով տարբեր չափերի և ձևերի խոռոչներ: ՀՀ-ում այդ խոռոչները ձևավորվել են հիմնականում պերմի, յուրայի, կավճի և էոցենի հասակի կրաքարերում [8]: Հաճախ դրանք «զարդարված են» տարբեր ձև, չափեր և գունավորում ունեցող կարստային առաջացումներով՝ ստալակտիտներով, ստալագմիտներով, ստալագնատներով, վարագույրներով, կորալներով և այլն: Կարստային խոռոչները տարածված են Սյունիքի, Վայոց ձորի, Արարատի, Տավուշի և Լոռու մարզերում [9]:

2. Կլաստոկարստային խոռոչները ձևավորվում են հիմնականում կրաքարային կոնգլոմերատներում: Կոնգլոմերատներն իրար կապակցող կրաքարային ցեմենտը ջրի ազդեցության հետևանքով լուծվում է, որի արդյունքում կոնգլոմերատը վեր է ածվում խոռոչի հատակում կուտակված տարբեր չափեր ունեցող գլաքարերի շեղջերի: Վերջիններիս էլ խոռոչից դուրս են բերում ջրային հոսքերը. որքան հզոր և առատ է ջրային շիթը, այնքան շատ է դուրս բերվող նյութը, թույլ ջրհոսքերի դեպքում քարանձավում կուտակված գլաքարերը սովորաբար տեղապտույտ են գործում քարանձավի ներսում՝ չլքելով այդ տարածքները: Կլաստոկարստային խոռոչները տարածված են Վայոց ձորի մարզում [10]:

3. Հրաբխային խոռոչները ներկայացված են պլիոցեն-չորրորդական ժամանակաշրջանի անդեզիտաբազալտային հոսքերում ձևավորված դատարկություններով, որոնք հանդես են գալիս երկու ենթատեսակով՝ լավային-կոնտակտային քարայրներով և լավային թունել-քարանձավներով: Լավային-կոնտակտային քարայրները տեղադրված են գետերի հովիտների ու կիրճերի գառիթափ և ուղղաձիգ լանջերին ու ձևավորվում են հարևան լավային հոսքերի կոնտակտային գոտիների մեջ: Դրանց առաջացումը տեղի է ունենում կոնտակտային գոտիներից խարամային նյութի հեռացման հետևանքով: Հետագայում այդ խոռոչների մի մասը մարդու կողմից որոշակի ձևափոխումներից հետո օգտագործվել է տարբեր նպատակների (բնակարան, տնտեսական և օժանդակ շինություններ) համար: Դրանց մեծամասնությունն ունի ոչ մեծ չափեր (երկարությունը և լայնությունը՝ մինչև 20 մ), ոչ բարձր (բարձրությունը՝ մինչև 5 մ) առաստաղ, որը մեղմաթեք

իջնում է դեպի խոռոչի եզրերը [11]: Լավային թունելներն առաջանում են լավային հոսքի անհավասարաչափ սառեցման հետևանքով, երբ սառած կեղևի տակից արտահոսում է դեռևս հեղուկ լավան: ՀՀ-ում այդպիսի քարանձավների երկարությունը հասնում է 100...120 մ-ի: Հրաբխային խոռոչները տարածված են ՀՀ բոլոր մարզերում:

4. Սուֆոզիոն քարայրները ձևավորվում են տուֆերում և տուֆածին բեկորային ապարներում (հատկապես հրաբխածին-նստվածքային ապարներում): Այդ ապարները կազմված են հրաբխային մոխրով ցեմենտացած հրաբխային և նստվածքային ապարների տարբեր չափերի բեկորներից: Սուֆոզիայի արդյունքում տեղի է ունենում հրաբխային մոխրի մանրագույն մասնիկների տեղատարում, որը նպաստում է ապարների ամրության թուլացմանը: Այնուհետև այդ ապարները ջրի և քամու կողմից տեղատարվում են՝ ձևավորելով տարբեր մեծության խոռոչներ: Դրանք տարածված են Սյունիքի, Արարատի, Կոտայքի, Արագածոտնի, Լոռու, Վայոց ձորի մարզերում [12]:

5. Արհեստական քարայրները ստեղծվում կամ ձևավորվում են մարդու աշխատանքի արդյունքում: Դրանց թվին են դասվում նաև բնական ծագում ունեցող այն խոռոչները, որոնք ծավալային և կառուցվածքային զգալի փոփոխությունների են ենթարկվել մարդկանց կողմից: Արհեստական քարայրները ստեղծվում են որոշակի նպատակով և ունեն իրենց բնորոշ ճարտարապետական-կառուցվածքային առանձնահատկությունները: Դրանք ստորաբաժանվում են երկու ենթատեսակների՝ Ժայռափոր (վիմափոր) կառույցների և ստորգետնյա շինությունների: Ժայռափոր կառույցները տեղադրված են տարբեր ապարներում՝ տուֆերում, բազալտներում, տրավերտիններում, կրաքարերում, փուխր գրունտներում և այլն: Այդպիսի խոռոչներ (ծավալներ) ստանալու համար օգտագործվել են տարբեր գործիքներ և տեխնոլոգիաներ: Ստորգետնյա շինությունները վերգետնյա կառույցների նման ունեն միևնույն կոնստրուկտիվ տարրերը՝ հատակ, պատեր, առաստաղ: Որպես շինանյութ օգտագործվել է քարը, որպես ցեմենտացնող նյութ՝ կրաշաղախը: Ստորգետնյա շինությունները կամ սկզբնապես այդպես են կառուցվել, կամ էլ հետագայում այդպիսին են դարձել նախապես վերգետնյա տարբերակով կառուցված շինությունները՝ հետագա կառուցապատումների կամ լանդշաֆտի փոփոխության արդյունքում: Ժայռափոր (վիմափոր) կառույցները և ստորգետնյա շինությունները տարածված են ՀՀ բոլոր մարզերում:

ՀՀ տարածքի ստորգետնյա խոռոչների բազմաքանակությունը և բազմազանությունը թույլ է տալիս դրանք օգտագործել զբոսաշրջության տարբեր ոլորտներում [13]:

#### **Արդյունքներ և քննարկում**

##### ***Քարանձավների օգտագործման հիմնական ուղղությունները ՀՀ զբոսաշրջության ոլորտում***

Կապված քարանձավների ձևաչափական առանձնահատկությունների (չափեր, ծավալ), բնական պայմանների (միկրոկլիմա, կենդանական աշխարհի առկայություն), աշխարհագրական դիրքի (հեռավորությունը ճանապարհներից և տուրիստական արահետներից) հետ՝ ՀՀ ստորգետնյա խոռոչները զբոսաշրջության ոլորտում կարևոր դեստինացիայի դերի են հավակնում: Երկրի

տարածքով մեկ քարանձավների սփռվածությունը թույլ է տալիս դրանք ընդգրկել տարբեր ուղղվածություն ունեցող զբոսաշրջային տուրերի մեջ՝ բազմազանություն մտցնելով իրականացվող էքսկուրսիաներում: Ներկայումս դրանք օգտագործվում են հետևյալ ուղղություններով՝ արկածային, ճանաչողական-կրթական, կրոնական-ճանաչողական, մշակութային:

*Արկածային զբոսաշրջություն:* Արկածային զբոսաշրջության օբյեկտներ են հանդիսանում կարստային և կլաստոկարստային քարանձավները և հորերը (վիհերը): Նեղ անցումների, օղի բարձր հարաբերական խոնավության և ցածր ջերմաստիճանների պատճառով արկածային քարանձավային զբոսաշրջությունը դիտվում է որպես զբոսաշրջության սպորտային և էքստրեմալ տեսակ: Դրանց առանձին հատվածներում անցուդարձ հնարավոր է իրականացնել ալպինիստական հնարքների և օժանդակ սարքավորումների կիրառումով: ՀՀ-ում այդպիսի օբյեկտներ են Արջերի, Մագելանի քարանձավները, Այծերի, Անակնկալ վիհերը (Վայոց ձոր), Դողղնաձակ քարանձավը (Սյունիք), Մակարի քարանձավը, Խոր հոր, Աղավնու հոր հորերը (Արարատ), Ջրնգան, Վեց փերիներ (Տավուշ) վիհերը: Զբոսաշրջության այս տեսակով հիմնականում զբաղվում են ֆիզիկական պատրաստվածություն ունեցող անձինք:

*Ճանաչողական-կրթական զբոսաշրջություն:* Զբոսաշրջության այս տեսակի համար ՀՀ-ում առկա են հարյուրավոր հասանելի օբյեկտներ՝ ժայռածածկեր, քարայրներ և քարանձավներ: Դրանց միջոցով տարիքային տարբեր խմբերի և կրթական տարբեր մակարդակ ունեցող այցելուները կարող են ծանոթանալ երկրի ընդերքում ձևավորված խոռոչների առաջացման և բնակեցման պատմության հետ: Ներկայումս գործում են նման մի քանի վայրեր՝ Արենի-1 («Ծակուտ քար») քարանձավ-հնավայրը, Մանահինի լավային թունելը («Մենձ Էր»), Ջարնի-Պարնի քարայրային համալիրը: Այս ոլորտում օգտագործվող ստորգետնյա խոռոչները յուրօրինակ երկրաբանական լաբորատորիաներ են՝ ինքնատիպ կլիմայական պայմաններով և կենդանական աշխարհով: Հայաստանի տարածքում ապաստանած մոտ 30 տեսակի չղջիկների մեծ մասը հանդիպում է այս քարանձավներում: Հատկապես բազմազան է Մագելանի, Արջերի, Կարմիր (Վայոց ձոր) քարանձավների կենդանական աշխարհը: Այս տեսակի ճանապարհորդությունները հատկապես կարևոր նշանակություն ունեն դպրոցական տարիքի երեխաների համար, քանի որ քարանձավներում կարելի է ուսումնասիրել բազմաթիվ թեմաներ՝ կապված ֆիզիկայի, քիմիայի, աշխարհագրության, կենսաբանության և այլ առարկաների հետ: Այդ հանգամանքն էլ կարող է նպաստել վաղ տարիքից աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը, հայրենաճանաչողությանը, էկոլոգությանը և այլն:

*Կրոնական-ճանաչողական զբոսաշրջություն:* Զբոսաշրջության այս տեսակի համար ՀՀ-ում առկա են մոտ մեկ տասնյակ բարձրակարգ օբյեկտներ՝ ժայռափոր մատուռներ, վանքեր, առաջին քրիստոնյաների հավաքատեղիներ, ճգնարաններ և այլն: Մակայն ներկայումս դրանցից միայն Գեղարդավանքն (Այրիվանք) է գործում. այն Հայ Առաքելական եկեղեցու սեփականությունն է հանդիսանում: Այստեղ հավատացյալները և զբոսաշրջիկները ծանոթանում են վանքի պատմա-

կան և մշակութային արժեքներին, այցելում են ժամերգության, մասնակցում են կրոնական տարբեր միջոցառումների: Մարտիրոսի Մբ Աստվածածին ժայռափոր վանքը, Երերույքի տարածքում գտնվող առաջին քրիստոնյաների հավաքատեղի-քարանձավները, Գեղարդաձորի, Խոսրովի արգելոցի, Զովքի (Կոտայք) ժայռափոր ճգնարաններն օգտագործվում են միայն տեղացիների և տարածքը ճանաչողների կողմից՝ հիմնականում կրոնական տոների օրերին:

*Մշակութային զբոսաշրջություն:* ՀՀ-ում մշակութային զբոսաշրջության օբյեկտները բաժանվում են երկու խմբի՝ ժայռափոր (վիմափոր) կառույցներ և ժայռանկարչության: Ժայռափոր կառույցները, որոնք հիմնականում պաշտամունքային են, թույլ են տալիս ներկայացնել հայկական ժայռափոր մշակույթի մոտ երեք հազարամյա պատմությունը: Սկսած ուրարտական ժամանակներից մինչև ուշ միջնադար ստեղծվել են բարձրարժեք վիմափոր կառույցներ՝ ջրանցքներ, եկեղեցիներ, մատուռներ, բնակարաններ և այլն: Այդպիսի օբյեկտներ են Երևանի ուրարտական ջրանցքների (Դավա, Ումեշինի) թունելային հատվածերը, ՀՀ ողջ տարածքով սփռված վիմափոր եկեղեցիներն ու մատուռները (Գեղարդաձորի մատուռներ և եկեղեցիներ), ժայռափոր բնակավայրերը (Դառաբավոր, Հին Գորիս, Հին Խնձորեսկ, Ողջաբերդ, Սպիտակի վիմափոր բնակավայր): Ժայռանկարչության օբյեկտները համեմատաբար քիչ են (Քասաղի կիրճի քարանձավներ, Կաքավաձորի ժայռածածկ, Եղեգնաձորի տարածաշրջանի Գանձակ գյուղատեղիի քարայր), սակայն մեծ հետաքրքրություն են ներկայացնում այցելուների համար:

Քարանձավների ընդգրկումով զբոսաշրջության հեռանկարային տեսակներից են հանդիսանում հետևյալները՝ անձավաբուժությունը, անձավահնագիտական և անձավահնէաբանական տուրիզմը: Առաջարկվում է մի շարք քարանձավներ օգտագործել այդ նպատակների համար:

*Անձավաբուժությունը* կիրառվում է այն քարանձավներում, որտեղ բուժական գործոններ են հանդիսանում խոնավ օդի իոնացումը, դրա թարմացնող ազդեցությունը, բացարձակ մաքրությունը և համարյա անփոփոխ ջերմաստիճանը: Նման պայմաններ կարող են ապահովել Արջերի և Մոզրովի քարանձավների ստորին դահլիճները:

*Անձավահնագիտական տուրիզմը* ՀՀ-ում ունի լայն հեռանկարներ: Վերջին տարիներին հայ և օտար մասնագետների իրականացրած պեղումները վկայում են ՀՀ քարայրների և քարանձավների (Երևան-1, Արենի-1, Արենի-2, Ադիտու-3 և այլն) հնագիտական մեծ ներուժի մասին: Քարի դարից մինչև ուշ միջնադարով թվագրված գտածոները վկայում են դրանց կարևոր գիտական նշանակության մասին: Այդ առումով կարևորվում է զբոսաշրջիկների ընդգրումը հնագիտական աշխատանքներին:

*Անձավահնէաբանական տուրիզմի* համար կարևոր օբյեկտներ են հանդիսանում հիմնականում դժվարամատչելի քարանձավներն ու քարայրները, որտեղ կենդանիները կարողացել են պատսպարվել կամ երկարատև ապաստան գտնել: Մինչև օրս անձավահնէաբանական հատուկ ուսումնասիրություններ չեն անցկացվել, սակայն հատուկենտ գտածոները վկայում են ՀՀ քարանձավների և քարայրների կարևոր հնէաբանական արժեքի մասին:

### Զբոսաշրջային քարանձավների ստեղծումը ՀՀ-ում որպես քարանձավային տուրիզմի զարգացման առաջնահերթ ուղղություն

Աշխարհի շատ երկրներում վերջին տասնամյակներին կարևորվում է քարանձավային զբոսաշրջային օբյեկտների (show cave) ստեղծումը՝ բնական կամ արհեստական քարանձավների բարեկարգման և ինժեներային սարքավորման ճանապարհով: Այդ քարանձավներում այցելություններն անվտանգ կարգով ուղեկցվում են գիդ-էքսկուրսավարների միջոցով: Էքսկուրսիաների ընթացքում ներկայացվում է քարանձավի պատմությունը, երկրաբանությունը, կենդանական աշխարհը, կլիմայական առանձնահատկությունները, քարանձավի հետ կապված լեգենդները, հետաքրքիր պատմությունները և այլն:

Հաշվի առնելով ՀՀ տարածքում քարանձավների բազմազանությունը, ՀՀ Կառավարությունը 2015 թ. դեկտեմբերի 10-ի նիստի N<sup>o</sup> 54 արձանագրային որոշման 30-րդ կետով ընդունել է «Զբոսաշրջության նպատակով քարանձավների արդյունավետ օգտագործումն ապահովող միջոցառումների» ծրագիրը: Ըստ այդ ծրագրի նախատեսվում էր ոչ պետական կազմակերպություններին վարձակալությամբ տրամադրել Վայոց ձորի մարզի Մագելանի, Արենի-1, Մոզրովի, Արջերի և Արագածոտնի մարզի քարե դռնավոր քարանձավները՝ դրանց հենքի վրա էքսկուրսիոն քարանձավներ ստեղծելու նպատակով: Ներկայումս գործում է միայն Արենի-1 քարանձավը, մյուսներում հետազոտական, բարեկարգման և կահավորման աշխատանքները շարունակվում են:

Դեռևս ամբողջությամբ չեն բացահայտված Գեղարդաձորի ժայռափոր քարայրների, Վայոց ձորի կարստային և կլաստոկարստային քարանձավների, Լոռվա և Սյունիքի քարանձավային բնակավայրերի, Արագածոտնի քարե դռնավոր քարանձավների զբոսաշրջային պոտենցիալը: Դրանց ընդգրկումը զբոսաշրջային տուրերում կամ դրանց հիմքի վրա ստեղծված էքսկուրսիոն քարանձավները թույլ կտան բացահայտելու ՀՀ քարանձավների ինքնատիպ աշխարհը:

ՀՀ էքսկուրսիոն քարանձավներից շատերի առանձին դահլիճները կամ ապագայում շրջանառության մեջ դրվող նոր քարանձավները կարող են օգտագործվել նաև այլ ձևերով՝ որպես գիտական և ուսումնական կենտրոններ (կլիմայական, կենդանաբանական, երկրաբանական, սելսմիկ դիտարկումների կենտրոն), գինու, լիկյորի, գարեջրի համտեսի վայր, պարասարահ (համերգասարահ, կինոթատրոն), ամուսնությունների գրանցման գրասենյակ, ատրակցիոն, թանգարան (անձավագիտական, երկրաբանական, լեռնային գործի, հնէաբանական) և այլն: Հատկապես մեծ է գինու համտեսի վայր (սպելեոէնոտեկ) և քարանձավային թանգարան ստեղծելու պոտենցիալ ունեցող խոռոչների քանակը:

*Սպելեոէնոտեկների ստեղծում:* Խաղողագործության և գինեգործության հնագույն հայրենիք համարվող Վայոց ձորում հայտնի են մոտ մեկ տասնյակ քարանձավներ և քարայրներ, որոնք կարող են ծառայել տեղում ստացած գինու պահեստավորման և համտեսի համար նախատեսված վայրեր: Այդ քարանձավներում ջերմաստիճանը և խոնավությունը հաստատուն են, որի հետևանք

քով դրանք գինու ավանդական պահպանության (կարասների մեջ) լավագույն վայրերն են հանդիսանում: Նման վայրեր կարող են ծառայել նաև Տավուշի և Լոռու մարզերի մի շարք քարանձավներ և քարայրներ [14]:

*Քարանձավային թանգարանների ստեղծում:* ՀՀ շատ քարանձավներում պեղված նյութը ամբողջությամբ չի ցուցադրվում որևէ թանգարանում: Քարանձավների պեղման արդյունքում հայտնաբերված արտեֆակտների մեծ մասը հնարավորության դեպքում պետք է ցուցադրվի անմիջապես քարանձավում կամ դրա անմիջական հարևանությամբ գտնվող այցելուների կենտրոնում: Քարանձավի աստիճանական թանգարանացումը թույլ կտա այն վերածել ստորգետնյա ինքնատիպ թանգարանի, որի ցուցանմուշներ են դառնալու քարանձավում ապրած մարդկանց կենցաղի, քարանձավի և հարևան տարածքների կենդանական և բուսական աշխարհի մասին վկայող գտածոները: Նման ռեսուրս ունեն ՀՀ տարածքում գտնվող համարյա բոլոր խոռոչները, հատկապես Հրազդանի, Դեբեդի, Չորագետի, Ախուրյանի, Ազատի, Արփայի և Որոտանի հովիտների քարանձավները և քարայրները: Համապատասխան ենթակառուցվածքների առկայության դեպքում դրանք կարող են հանդիսանալ հնագիտական կամ երկրաբանական զբոսայգիների բաղկացուցիչ մաս:

### **Եզրակացություն**

ՀՀ տարածքում իրականացված անձավագիտական աշխատանքները ցույց են տվել, որ երկրում առկա տարբեր ծագում, չափեր և ձևաբանություն ունեցող ստորգետնյա դատարկությունները կարող են լավագույն հիմք հանդիսանալ քարանձավային զբոսաշրջության առանձին ուղղությունների զարգացման համար: Հաշվի առելով ՀՀ-ում առկա ստորգետնյա խոռոչների բազմաքանակությունը և բազմազանությունը, առաջարկվում է դրանք օգտագործել զբոսաշրջության տարբեր ոլորտներում: Ներկայումս այդպիսի ուղղություններ (տեսակներ) են՝ արկածային, ճանաչողական-կրթական, կրոնական-ճանաչողական և մշակութային զբոսաշրջությունները: Առաջարկվում է հեռանկարում դրանք ընդգրկել նաև այլ ուղղություններում՝ անձավաբուժություն, անձավահնագիտություն, անձավահնէաբանություն: Առանձին խնդիր է նաև էքսկուրսիոն քարանձավների ցանցի ստեղծումը ՀՀ ողջ տարածքում: Բացի բուն նպատակից, էքսկուրսիոն քարանձավների առանձին սրահներ կամ առանձին քարանձավներ (քարայրներ) կարող են օգտագործվել նաև որպես գինու համտեսի վայրեր, թանգարաններ և այլն:

**Հետազոտությունն իրականացվել է ԲՊՀ ֆինանսական աջակցությամբ՝ № 2ԳՀ-22/0011 ծածկագրով հայտի շրջանակում:**

### **Գրականության ցանկ**

- [1] **В.Н. Дублянский, Г.Н. Дублянская, И.А. Лавров**, Классификация, использование и охрана подземных пространств, Екатеринбург, УрО РАН, 2001.
- [2] Աշխարհի ստորգետնյա տեսարժան վայրերի մասին կայք: [showcaves.com](http://showcaves.com).



- [3] ISCA Newsletter January & February 2023, p. 9, <https://www.i-s-c-a.org/clanok/279-isca-newsletter-january-february-2023>.
- [4] ՀՀ Կառավարության 10 դեկտեմբերի 2015 թ. նիստի «Զբոսաշրջության նպաստակով քարանձավների արդյունավետ օգտագործումն ապահովող միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» N 54-30 որոշում:
- [5] **С.П. Бальян, Р.А. Ванян**, Пещеры Армении и пути их хозяйственного использования. Пещеры. Методика изучения. Межвузовский сборник научных трудов, 1986, 6–12.
- [6] Լեռնահայաստանի քարանձավային կառույցները՝ Արցախ. խմբ. Ս. Շահինյան, Երևան, ՃՇՀԱՀ, 2020, 188 էջ:
- [7] **R. Ruggieri, S. Davtyan, S. Shaihinyan, A. Ugujyan, R.Orsini, A. Ingallinera, G. Agosta**, Armenian karst project, Carbonates and Evaporites, Springer Nature, 2022.
- [8] **В.Р. Бойнагрян**, Проявления карста и образование подземных пустот на Армянском нагорье, Ученые записки ЕГУ. Геология география 3 (2015) 31-37.
- [9] **Р.А. Мандалян**, О развитии карста в Тавушской области Армении. Доклады НАН РА 4 (2002) 336–339.
- [10] **М.А. Мовсесян, В.П. Асратян, А.Л. Ананян, Г.О. Вартамян**, Некоторые вопросы четвертичного карстообразования на территории Арм. ССР, Ученые записки ЕГУ. Естественные науки 1 (1983) 153–158.
- [11] Հայկական ՄՍՀ գեոմորֆոլոգիան, ԳԱ հրատ., Երևան, 1986, 239 էջ:
- [12] **К.И. Карапетян**, Условия образования палеолитических пещер ущелья р. Раздан (Армянская ССР), Геология четвертичного периода (плейстоцен), Ереван, 1977, с.110-117.
- [13] **Ս.Ռ. Դավթյան**, Հայաստանի Հանրապետության ստորգետնյա տարածությունները որպես համապիտանի զբոսաշրջային օբյեկտներ, ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ 2 (2018) 34-41:
- [14] **C. G. Chavdarian, S. Davtyan, S. Shahinyan**, Exploring the Caves of Armenia by the First Official U.S. Caving Expedition (2007-2013), Journal of Architectural and Engineering Research 4 (2023) 38–50. doi: 10.54338/27382656-2023.4-004.

## ИСПОЛЬЗОВАНИЕ ПЕЩЕР В СФЕРЕ ТУРИЗМА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

**Տմբատ Րուբիկովիչ Դավթյան\*, Մերի Վարդանովնա Վարդանյան, Նարինե Տամվելովնա Տիմոնյան, Անաիտ Լաերտովնա Արամյան**

*Государственный университет им. В. Брюсова, г. Ереван, РА*

*\*srdavtyan@mail.ru*

*В статье рассматривается проблема использования пещер в различных направлениях (видах) туризма в Армении. В настоящее время этот огромный и оригинальный ресурс играет крайне незначительную роль в формировании армянского туристического продукта. Одной из причин является*

*отсутствие соответствующей информации о пещерных ресурсах. Тезисы, представленные в статье, могут быть полезны руководителям туристического сектора и инвесторам в сфере спелеотуризма.*

**Ключевые слова:** *приключенческий туризм, познавательного-образовательный туризм, религиозно-познавательный туризм, культурный туризм, экскурсионная пещера*

## THE USE OF CAVES IN THE FIELD OF TOURISM IN THE REPUBLIC OF ARMENIA

**Smbat Davtyan\*, Mary Vardanyan, Narine Simonyan, Anahit Aramyan**

*Brusov State University, Yerevan, RA*

*\*srdavtyan@mail.ru*

*The article deals with the problem of using caves in various directions (types) of tourism in Armenia. Currently, this huge and unique resource plays an insignificant role in the formation of the Armenian tour product. One of the reasons is the lack of relevant information about cave resources. The theses presented in the article may be useful for the managers of tourism industry and those investing in cave tourism.*

**Keywords:** *adventure tourism, cognitive and educational tourism, religious and cognitive tourism, cultural tourism, show cave*

**Դավթյան Սմբատ Ռուբիկի, տ.գ.թ.** (ՀՀ, ք. Երևան) - Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, Սերվիսի և զբոսաշրջության ամբիոն, ավագ դասախոս, (+374)93262830, *srdavtyan@mail.ru*, **Վարդանյան Մերի Վարդանի** (ՀՀ, ք. Երևան) - Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, Սերվիսի և զբոսաշրջության ամբիոն, հայցորդ, (+374)94427523, *maryvardanyan69@gmail.com*, **Մինոնյան Նարինե Սամվելի** (ՀՀ, ք. Երևան) - Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, Սերվիսի և զբոսաշրջության ամբիոն, դասախոս, (+374)77549790, *narinesimonyan1@gmail.com*, **Արամյան Անահիտ Լաերտի** (ՀՀ, ք. Երևան) - Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, Սերվիսի և զբոսաշրջության ամբիոն, ուսանող, (+374)99344460, *anahitaramyan12@gmail.com*  
**Давтян Смбат Рубикович, к. т. н.** (РА, г. Ереван) - Государственный университет им. В. Я. Брюсова, кафедра Сервиса и туризма, старший преподаватель, (+374)93262830, *srdavtyan@mail.ru*, **Варданян Мери Вардановна** (РА, г. Ереван) - Государственный университет им. В. Я. Брюсова, кафедра Сервиса и туризма, соискатель, (+374)94427523, *maryvardanyan69@gmail.com*, **Симонян Нарине Самвеловна** (РА, г. Ереван) - Государственный университет им. В.Я. Брюсова, кафедра Сервиса и туризма, преподаватель, (+374)77549790, *narinesimonyan1@gmail.com*, **Арамян Анаит Лаэртровна** (РА, г. Ереван) - Государственный университет им. В. Я. Брюсова, кафедра Сервиса и туризма, студентка, 099344460, *anahitaramyan12@gmail.com*

**Davtyan Smbat, doctor of philosoph (Ph.D) in Engineering** (RA, Yerevan)- Brusov State University, Chair of Service and Tourism, Senior Lecturer, (+374)93262830, *srdavtyan@mail.ru*, **Vardanyan Mary** (RA, Yerevan) - Brusov State University, Chair of Service and Tourism, postgraduate student, (+374)94427523, *maryvardanyan69@gmail.com*, **Simonyan Narine** (RA, Yerevan) - Brusov State University, Chair of Service and Tourism, Lecturer, (+374)77549790, *narinesimonyan1@gmail.com*, **Aramyan Anahit** (RA, Yerevan) - Brusov State University, Chair of Service and Tourism, student, (+374)99344460, *anahitaramyan12@gmail.com*

Ներկայացվել է՝ 02.05.2023թ.

Գրախոսվել է՝ 19.05.2023թ.

Ընդունվել է տպագրության՝ 30.08.2023թ.